«ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ», հ. VI, *ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1981, 1050 էջ։*

Լույս տեսավ հայ ժողովրդի պատմության ակադեմիական հրատարակության VI հատորը՝ «Հայաստանը 1870—1917 թվականներին», ուր պատմական գիտության զարգացման ժամանակակից մակարդակին համապատասխան քննարկված ու լուսաբանված են հայ ժողովրդի պատմության թերևս ամենաճակատագրական շրջանի հանգուցային պրոբլեմները։ Մասնագետները, դաղափարախոսական բնագավառի աշխատողները, ընթերցող լայն հասարակայնությունը հնարավորություն ստացան հաղորդակցվելու տարիներ շարունակ սպասված գիտական ընդհանրացնող մեծարժեք ուսումնասիրության հետ, ուսումնասիրություն, որը ստեղծվել է ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի, հանրապետության առաջատար բաղմաթիվ պատմաբանների, ինչպես նաև տնտեսագետների, փիլիսոփաների, գրականագետների, լեզվաբանների, արվեստագետների և այլ մասնագետների տևական ու քրտնաջան աշխատանքով։ Գիրքը ծնվել է ժամանակին, որպես գիտական մտքի վերջին տասնամյակների հանրագումար։ Այն մասնավորապես հանդիսանում է 1950—1970-ական թվականների գիտական հետազոտությունների, նաև հարուստ աղբյուրագիտական բազայի հիման վրա ստեղծված ամբողջական ուսումնասիրություն, որն աչքի է ընկնում իր կուռ միասնությամբ։ Եվ դա այն ժամանակ, երբ գրքում քննարկված են բազմաթիվ ու բազմազան պրոբլեմներ։

Գրքում արծարծված բազմազան պրոբլեմների գիտական ընդհանրացման առանցքը մարքսիստական-լենինյան մեթոդաբանությունն է, որը ստեղծում է միասնական դիտական հենք, պատմական-մատերիալիստական կուռ տրամաբանություն, միմյանց է շաղկապում վերին աստիճանի բարդ, առերես հակասական թվացող, նախկինում խճողված հարցերը, օգնում է ստեղծելու Հայաստանի, հայ ժողովրդի պատմության կարևորագույն, բեկումնային փուլի, նրա կենսագրության ամբողջական, գիտական պատկերը։

1870—1917 թթ. ժամանակաշրջանի գիտական պատմության ստեղծումը գրքի հեղինակային կոլեկտիվից, խմբագիրներից պահանջում էր ամենից առաջ պատմական մոտեցում, որը հիմնականում հաջողությամբ իրականացված է։ Դա մասնավորապես վերաբերում է մինչպրոլետարական և պրոլետարական հեղափոխությունների դարաշրջաններում ազգային հարցի, ազգային-ազատագրական շարժումների բնույթի, նրանց պատմական տեղի, քաղաքական կուսակցությունների դերի գնահատման հարցերին։ Ընթերցողը գրքում գտնում է իրեն հուզած և հուզող բազմաթիվ կնճռոտ հարցերի ուղղակի, գիտական պատասխանը։

Գրքում զգալի տեղ են գրավում և անհրաժեշտ գիտական մակարդակով են քննարկված Հայաստանի սոցիալ-տնտեսական, քաղաքական կյանքի հարցերը։ Այն ընդգրկում է ինչպես Արևելյան, այնպես էլ Արևմտյան Հայաստանը։ Ընթերցողն առաջին անգամ հնարավորություն է ստանում իր ամբողջության մեջ տեսնելու Հայաստանը, նրա տնտեսական զարգացման դինամիկան, աշխատավորների սոցիալական ու երկրի քաղաքական կյանքի պատկերը։ Նախկինում կատարված մեծարժեք ուսումնասիրությունների նյութի բարեխիղճ օգտագործմանն ավելացել է նաև իրենց՝ հեղինակների լուրջ և մնայուն հետազոտության արդյունքները։ Հեղինակները հանգում են այն ճշմարիտ հետևությանը, որ «Հայաստանի երկու հատվածների հայ ազգաբնակչության կացությունը և զարգացման մակարդակը զգալիորեն տարբեր էին։ Արևելյան Հայաստանում, Ռուսաստանի բարերար ազդեցության պայմաններում հայերը աճում ու առաջադիմում էին, մինչդեռ Արևմտյան Հայաստանում, սուլթանական կառավարության ազգահալած քաղաքականության հետևանքով, նրանք նվազում ու բնաջնջվում էին» (էջ 24)։ Դա մասնավորապես լավ է երևում դեմոգրաֆիական տեղաշարժերից, որոնք լայնորեն քննարկված են գրքում (էջ 19—24)։

Հատորում հանգամանորեն քննարկված են կապիտալիստական հարաբերությունների զարգացման հարցերը, որոնք մասնավորապես վերաբերում են գյուղի քայքայմանը, ֆաբրիկա-

ների, գործարանների, երկաթուղիների ու ճանապարհների շինարարությանը, Ալավերդու ու Զանգեզուրի պղնձարդյունաբերությանը, բամբակազտիչ ձեռնարկություններին, կաշվի, գինու, օղու, կոնյակի արտադրությանը, կաթնամշակմանը և այլն։ Աճում էր քաղաքային բնակչությունը, բյուրեղանում էին դասակարգային հարաբերությունները, խորանում էր ժողովրդական մասսաների աղքատացման պրոցեսը։ Այն ճիշտ միտքն է ընդգծված, որ տնտեսական հետամնացության, մեծ քաղաքների և երկաթուղային ճանապարհների բացակայության հետևանքով հայ բուրժուազիան կազմավորվեց նախ Անդրկովկասի արդյունաբերական գլխավոր օջախներում՝ Բաքվում, Բաթումում, Թիֆլիսում, և ապա՝ Հայաստանում։

Զգալի տեղ է հատկացված արևմտահայ բուրժուազիայի ու պրոլետարիատի ձևավորման հարցերին, մի պրոցես, որը տեղի էր ունենում սուլթանական բռնակալության հայհալած և եվրոպական տերությունների՝ Թուրքիայում վարած գաղութային քաղաքականության պայմաններում։

Կապիտալիզմի զարգացմանը զուգընթաց ձևավորվեց հայ արդյունաբերական պրոլետարիատը, որը կազմում էր համառուսաստանյան պրոլետարիատի ազգային չոկատներից մեկը, և բախտորոշ գեր էր խաղալու Հայաստանի հասարակական-քաղաքական կյանքի հետագա զարգացման գործում։ Ազատագրական շարժման պրոլետարական փուլում նրա դասակարգային դիրքերից էին գնահատվելու ազգային, դեմոկրատական, ագրարային և այլ շարժումները, քաղաքական կուսակցությունների ու գործիչների գործունեությունը, հայ ժողովրդի նոր պատմության մեջ նրանց խաղացած դերը։

Հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժման ճարցերը և՛ բովանդակության և՛ ծավալային իմաստով գերիշխող տեղ ունեն գրքում։ Մեծ է այդ հարցերի շրջանակը՝ սկսած 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից մինչև առաջին համաշխարհային պատերազմը ներառյալ։ Գիտական պատշաճ մակարդակով քննարկված և գնահատված են հայկական հարցի զարգացման փուլերը, օսմանյան բռնապետության և երիտթուրքերի հայաջինջ քաղաքականությունը, գնահատված են մեծ տերությունների շահադիտական խաղերը և միջազգային դիվանագիտության փարիսեցիական կամ բացահայտորեն ենթադրվերը հայ ժողովրդի նվիրական ձգտումների՝ նրա միասնական հայրենիքի վերահաստատման, ժողովրդի նկատմամբ թուրքական բռնապետության վայրենի հալածանքի կանխման, դեմոկրատական բարեփոխումների ձախողման և այլ հարցերում։ Հիմնավորված է այն ճշմարիտ տեսակետը, որ Արևմտյան Հայաստանում ազգային-ազատագրական շարժումը ոչ թե ներմուծվել էր Արևելյան Հայաստանից, այլ հայ ժողովրդի այդ հատվածի նկատմամբ թուրքական բռնապետության վարած հայաջինջ քաղաքականության օրինաչափ հետևանքն էր։ Դա ազատատենչ ժողովրդի հերոսական պայքարն էր հանուն իր գոյատևման ու ազատության։

Հատորում ցույց է տրված, որ հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարն ուներ նաև սոցիալական բովանդակություն, որ այն խորապես դեմոկրատական էր, շոշափում էր գյուղացիության, արհեստավորության շահերը։ Իր բնույթով լինելով բուրժուադեմոկրատական շարժում, հասկանալի է, որ այն իր մեջ էր առնում ազգային բուրժուազիային, որը ձգտում էր շարժման ղեկը վերցնել իր ձեռքը և ղեկավարել այն, դառնալ սեփական շուկայի, երկրի հարստությունների տերը։ Հայ դեմոկրատական մտավորականությունն ակտիվորեն մասնակցում էր ազատագրական պայքարին, մերկացնում ազգային կերպարանքից գրեթե զրկված հայ խոշոր բուրժուազիային ու բարձրաստիճան չինովնիկներին, որոնք շնչին բացառությամբ սուլթանական ու ցարական կարգերի մեջ էին տեսնում իրենց գոյության հենարանը։

Հանգամանորեն քննարկված և ըստ արժանվույն գնահատված է 1870—1880-ական թվականների ազատագրական-հայրենասիրական խմբակների ու կազմակերպությունների գործունեությունը, լայն տեղ է հատկացված Հայաստանում և հայ իրականության մեջ նարոդնիկական շարժման հարցերին։ Անդրադառնալով հայդուկային-ֆիդայական շարժմանը, նշվում է, որ այն ազատագրական պայքարի ըմբոստ ու արդարացի մի ձև էր, իր դասակարգային բնույթով՝ հակաֆեոդալական, գյուղացիական-դեմոկրատական շարժում։ Սկզբնապես դրսևորվելով որպես տեղական հարստահարիչների դեմ ժողովրդի ինքնապաշտպանության համար զենքի դիմած փոքրաթիվ խմբերի պարտիզանական պայքար, այն ուղղվեց այդ կեղեքիչներին հովանավորող պետական պաշտոնեության ու կառավարության դեմ, ապա դարձավ օսմանյան բռնապետությունը թոթափել ձգտող հայ ազատամարտի տարերային ու հախուռն կրողը» (էջ 150)։ Հարկ է նշել, որ հայ պատմագիտության մեջ հայդուկային շարժման գնահատականը առաջին

անգամ է տրվում իր քիչ թե շատ ամբողջության մեջ։ Շոշափվում է շարժման բնույթը, այն դիտվում է որպես «գյուղացիության դասակարգային պայքարի յուրահատուկ ձև» (էջ 287), բացահայտվում է այդ շարժման և բուրժուազգայնական կուսակցությունների փոխհարաբերակցության հարցը։ Վերին աստիճանի ուշագրավ է շարժման ժողովրդական առաջնորդների կարծիքը դաշնակցականների խաղացած բացասական դերի մասին։ Արմենակ Ղազարյանը (Հրայր) դատապարտում էր ազգային ուժերը չլատելու բուրժուական կուսակցությունների վարքագիծը և պայքարի արկածախնդրական տակտիկան։ Անդրանիկը գրում էր. «Այս երդումը նշավ՝ առանց մեզ ըսելու, թե ինչ կուսակցության կպատկանինք. մենք չգիտեինք ալ, թե կան զանազան կուսակցություններ» (էջ 289)։ Մեկ ուրիշը նշում էր, «թե՛ մշեցին, և թե՛ սասունցին երբեք չհետաքրքրվեցան այդ կուսակցությանց ծրագիրներով... Մենք՝ մշեցի և սասունցիներս, միմիայն մեր ազգի փրկության սիրույն ամեն զոհողություն հանձն կառնենք...» (էջ 289) և այլն։ Տրված է շարժման ականավոր գործիչների, ժողովրդական հերոսների՝ Աղբյուր Սերոբի, Արմենակ Ղազարյանի (Հրայր), Անդրանիկի, Գևորգ Չաուշի և այլոց դնահատականը։ Նշվում է թուրքական սուլթանիզմի դեմ բալկանյան, մասնավորապես բուլղարական, մակեդոնական և հայ ժողովրդի ազատագրական շարժումների ընդհանրությունը, դրվում է դրանց գնահատման միասնականության հարցը։ Կարծում ենք, որ առաջադրված հարցադրումները, այդ հարցի վերաբերյալ եղած ուսումնասիրությունները կարող են հիմք հանդիսանալ հայդուկային շարժման համապարփակ հետազոտման ու ըստ արժանվույն գնահատման համար։

Անկասկած գրքի առավել կարևոր բաժիններից է հասարակական-քաղաքական հոսանքներին ու տարբեր կուսակցությունների ձևավորմանը նվիրված գլուխը։ Նրանում տրվում է պահպանողական, լիբերալ-բուրժուական և դեմոկրատական հոսանքների, քաղաքական կուսակցությունների դասակարգային բովանդակության գնահատականը։ Այս հարցերը գրքում ձեռք են բերում առանցքային նշանակություն, ի մի բերելով և միմյանց կապելով ազգային-ազատագրական շարժման բազմազան հարցերը։ 1885 թ. Մարսելում լույս տեսնող «Արմենիա» թերթի շուրջը համախմբված մի խումբ գործիչներ հիմք են դնում արմենական կազմակերպությանը։ Արմենականները թեև ակտիվ մասնակցություն ունեցան հայ ազգային-ազատագրական շարժումներին, բայց այդպես էլ չդարձան կազմակերպված, կուռ կուսակցություն։ Ավելի հանգամանորեն են քննարկված «Հնչակ», «Դաշնակցություն», «Սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպություն» («Սպեցիֆիկյան») կուսակցությունների ձևավորման, նրանց դասակարգային բովանդակության հարցերը։ Ճիշտ է այն սկզբունքային հետևությունը, որ «հնչակյանների նարոդնիկական սոցիալիզմը ոչինչ ընդհանուր բան չուներ մարքսիզմի հետ» (էջ 191), որ թեպետև նրանք շատ էին խոսում Կ. Մարքսի, մարքսիզմի մասին, բայց «մարքսիզմի ոգին նրանց համար մնում էր խորթ ու անհասկանալի» (էջ 192), որ արևմտահայերի ազատագրության նրանց ծրագիրն «անարխիստական սկզբունքների վրա էր կառուցված» (էջ 193) և այլն։ Ինչ վերաբերում էր «Դաշնակցություն» կուսակցությանը, ապա դարեվերջին, թեպետև նրան հաջողվեց ազգայնական ամբոխավարությամբ իր կողմը գրավել դգալի թվով աշխատավորներ, սակայն դրանով բնավ էլ չի փոխվում նրա բուրժուական էությունը։ Հեղինակները համառոտակի անդրադարձել են 1908 թ. ստեղծված «Ռամկավարական» կուսակցության ստեղծման հարցին (էջ 487)։

Ջխամրող հետաքրքրությամբ են կարդացվում 1890-ական թվականների ազգային-ազատագրական պայքարի հարցերին նվիրված բաժինները, մասնավորապես Սասունի 1894 թ. հերոսամարտի, Զեյթունի 1895 թ. ապստամբության, Վանի 1896 թ. ինքնապաշտպանական մարտերի, այս շրջանում բարենորոգումների մայիսյան ծրագրի, հայկական շարդերի, հայ ժողովրդի ճակատագրի նկատմամբ մեծ տերությունների քաղաքականության մերկացման և այլնի վերաբերյալ։

Կարևոր բաժին է կազմում 1900—1914 թթ. Արևմտյան Հայաստանի սոցիալ-տնտեսական ու քաղաքական դրությանը, ազատագրական շարժումներին վերաբերող գլուխները։

Թեպետև ընթերցողն արդեն քաջ ծանոթ է առաջին համաշխարհային պատերազմի տարիներին հայ ժողովրդի դառը ճակատագրին, այսուհանդերձ դարձյալ ու դարձյալ մեծ հետաքրքրությամբ են ընթերցվում կամավորական շարժմանը, արևմտահայության զանգվածային շարդերին ու տեղահանությանը, այդ ամենի նկատմամբ առաջադիմական ուժերի վերաբերմունքին նվիրված հատվածները։

Ազգային-ազատագրական շարժմանը զուգընթաց, նրա հետ անբաժանելիորեն կապված, հայ ժողովրդի պատմության 1870—1917 թթ. ժամանակաշրջանի բովանդակության կարևորա-

գույն բաղկացուցիչ մասն են կազմում նրա ազատագրական պայքարի սոցիալական, դասակարգային, պրոլետարական շարժման հարցերը:

Ռուսաստանում ազատագրական շարժման նոր, պրոլետարական փուլում հայ ժողովրդի հեռատես զավակները՝ Ստ. Շահումյանը, Բ. Կնունյանը, Ս. Սպանդարյանը և մյուսները ժողովրդի առաջադիմական ուժերին, պրոլետարիատին ու գյուղացիությանը կողմնորոշեցին դեպի լենինիզմ, դեպի ցարիզմն ու ապա բուրժուազիային տապալելու իրական ուղին:

Հայ իրականության մեջ մարքսիզմի տարածման առաջին քայլերը վերաբերում են անցյալ դարի 70—80-ական թվականներին: Գրքում հայ բանվորական, սոցիալ-դեմոկրատական, լենինյան-իսկրայական, բոլշևիկյան կազմակերպությունների առաջացման ու գործունեության, բանվորների ու գյուղացիների հեղափոխական պայքարի հարցերը քննարկված են անհրաժեշտ գիտական մակարդակով, բարեխղճորեն օգտագործված են վերջին տասնամյակներում պատմաբանների ձեռք բերած գլխավոր նվաճումները: Գիտական լրջախոհ քննարկման են ենթարկված 1905—1907 թթ., ռեակցիայի տարիների, հեղափոխական նոր վերելքի, առաջին համաշխարհային պատերազմի տարիների, Հոկտեմբերյան հեղափոխության նախապատրաստման ժամանակաշրջանի հարցերը:

Գրքի անուրանալի արժանիքներից է հայ գաղթավայրերին նվիրված բաժինը: Սովետահայ պատմաբանները հայ գաղթօջախների պատմությամբ առավել լրջորեն սկսեցին զբաղվել վերջին 2—3 տասնամյակներում: Այդ շնորհակալ աշխատանքի արդյունքներն ակնհայտ են: Գրքում առաջին անգամ ի մի է բերվում և ընթերցողին հանձնվում հայ գաղթօջախների պատմության ամբողջական պատկերը՝ քննարկվող ժամանակահատվածում:

Գրքի VI բաժինը նվիրված է մշակույթին և գիտությանը: Հանգամանորեն լուսաբանված են դպրոցի, գրականության, թատրոնի, երաժշտության, ճարտարապետության, կերպարվեստի, մամուլի, պատմագիտության, հայագիտության, հնագիտության, աղգագրության, տնտեսագիտության, փիլիսոփայության, բնական գիտությունների վիճակի ու զարգացման հարցերը: Միանգամայն ճիշտ է նշված, որ քննարկված ժամանակաշրջանում «մշակույթի ամենատարբեր ճյուղերում եղել է մի ընդհանուր գիծ, մի միասնական ընդհանրություն. դա հայ ժողովրդի պատմական ճակատագրից թելադրված ազատագրվելու հարատև ոգին էր, որ ստեղծագործելու և խիզախելու մշտական լիցք էր տալիս նրա մշակույթի գործիչներին» (էջ 750):

Գրքին կցված են քարտեզներ, ամենայն բարեխղճությամբ կազմված են ժամանակագրության, մատենագիտության, անձնանունների, տեղանունների ցանկեր, որոնք բարձրացնում են նրա գիտական արժեքը, հեշտացնում նման ծավալուն աշխատությանը ծանոթանալու և այն ուսումնասիրելու գործը:

Ցանկանում ենք համառոտակի կանգ առնել նկատված մի քանի թերություններ վրա, թերություններ, որոնցից դժվար էր խուսափել նման ծավալուն, բազմապրոբլեմատիկ աշխատության մեջ:

Պատմությանը վերաբերող գրքում նրա ծավալի մեկ երրորդը մշակույթին ու գիտությանը հատկացնելը, կարծում ենք, որ թեպետև հաճելի է, բայց և չափազանց է, մանավանդ, որ դրականության, արվեստի, գիտության առանձին ճյուղերի վերաբերյալ հրապարակի վրա կան մասնագիտական մեծարժեք ուսումնասիրություններ:

Գրքում մի շարք պատմական կարևորագույն պրոբլեմներ կամ ուղղակի դուրս են մնացել, կամ ճարևացիորեն շոշափվել: Այդպես է բանը Հոկտեմբերյան հեղափոխության նախապատրաստման ժամանակշրջանի իրադարձություններով ու նշանակությամբ հարուստ պատմության հարցում: Այդ բաժնում շրջանցվել են նորովի մեկնաբանված մի շարք պրոբլեմներ ու գիտական շրջանառության մեջ դրված բազմաթիվ նոր փաստեր: Չափազանց թույլ է կամ բացակայում է հունիսյան հարձակման, հուլիսյան իրադարձությունների, կոռնիլովյան միապետական դավադրության հետ առնչվող հարցերի լուսաբանումը: Ինչպես արդեն նշվել է, գրքի լուրջ արժանիքներից է այն, որ Արևմտյան Հայաստանը դուրս չի մնացել բազմազան հասարակական երևույթների, շարժումների լուսաբանման ոլորտից: Բայց ուղղակի անհասկանալի է, թե ինչու են գրեթե մոռացության տրվել Կարսի մարզում, Արևմտյան Հայաստանում, նաև Երևանի նահանգում շուրջ մեկ միլիոնանոց կովկասյան բանակի հետ առնչվող և հատկապես նրանում ծավալված հեղափոխական շարժման հարցերը: Դրանով կամա թե ակամա աղքատացել՝ է Հայաստանի պատմությունը, չեն արծարծվել, կամ չափազանց թույլ են լուսաբանվել զինվորական հեղափոխական-դեմոկրատական շարժումները 1915—1916 թթ.: Միանգամայն անբա-

վարար է լուսաբանված 1917 թ. մարտին կարսում ծավալված ապստամբությունը, որը Ռոձյանկոյի գնահատմամբ «ահեղ իրադարձություն» էր։

Լավ է, երբ գրքում տեղ է հատկացվել հայ բուրժուական ազգի ձևավորման ճարցին։ Դա, ինչպես նաև մի շարք այլ հարցադրումներ, յուրահատուկ դիտական, տեսական շունչ են տալիս գրքին։ Բայց մեղ այնքան էլ հավաստի ու համոզիչ չի թվում այդ կարևոր հարցի գիտական, մարքսիստական լուծումը։ Խոսքը չի վերաբերում նրան, որ ամեն ինչ պետք է դնել որոշակի սխեմաների մեջ ու բոլոր ազգերի ձևավորմանը միանշանակ պատասխան տալ։ Այդ հարցի նեղ մասնագետը չլինելով մենք, սակայն, կարծում ենք, որ «էթնիկական ընդհանրությունը» միայն բավականաչափ հիմք չի տալիս եզրակացության հանգելու «հայ ազգ» հասկացության ծավալի վերաբերյալ։ Պակաս կարևոր չեն նաև միասնական էկոնոմիկայի բացակայության կամ թույլ զարգացած տնտեսական կապերի, տարբեր պետականությունների առկայության գործոնները և այլն։ Կարծում ենք սխալ է պնդել, թե «հայ ժողովուրդը մինչև ազգ դառնալը թեկուզ և արդեն մի կայուն (ընդգծումը մերն է—Հ. Մ.) սոցիալ-էթնիկական, ընդհանուր ծագում ունեցող հանրություն էր...» (էջ 90)։ 91-րդ էջում Ստ. Շահումյանի հայտնի մտքի վկայակոչումը վերաբերում է XX դ. սկզբին, երբ իրոք էկոնոմիկայի զարգացումը թեպետև էլի թույլ էր, բայց որոշակի մակարդակ ուներ, քան թե անցյալ դարի 60—70-ական թվականներին, երբ կապիտալիզմը, տնտեսական միասնական կապերը մեղանում չափազանց թույլ էին։ Կարծում ենք, որ մասնագետներն ունեն իրենց ասելիքը հայ ազգի ձևավորման հարցի շուրջը։

Ինչպես դրախոսվող գրքում, այնպես էլ սովետահայ պատմագիտության մեջ առհասարակ, դեռևս ամբողջական, կուռ գիտական տեսք չի ստացել առաջին համաշխարհային պատերազմի տարիներին կամավորական շարժման գնահատականի հարցը։ Նախկինում ոմանց կողմից միակողմանի մոտեցում, կոպիտ սխալ էր թույլ տրվում, երբ անտեսվում (կամ գրեթե անտեսվում) էր այդ շարժման ազատագրական բնույթը։ Այն, իրոք, թուրքական բռնապետության դեմ հայ ժողովրդի դարավոր դայրույթի պոռթկումն էր նպաստավոր իրադրության մեջ, երբ Կովկասյան ռազմաճակատում ցարական Ռուսաստանը բախվում էր Թուրքիայի հետ։ Նման գնահատականի հետ մեկտեղ, կարծում ենք, որ այս հարցում պատմական մոտեցումն ինչ որ չափով խախտված է։

Այնուհետև. չնայած ընդհանուր առաջընթացին, դեռևս բավականաչափ պարզորոշություն չկա թուրքական բռնապետության դեմ հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժման բնույթի ճարցում։ Նշվում է, որ «այդ պայքարի գլխավոր ու առաջատար ուժն արևմտահայ գյուղացիությունն էր ու քաղաքի արհեստավոր դասը» (էջ 129)։ Գո՞ւցե ավելի ճիշտ է նշել, որ այդ շարժման ղեկավարությունը գտնվում էր ազգային-դեմոկրատական բուրժուազիայի ձեռքում։

Ճանկալի ելիներ, եթե գրքում մյուս կուսակցությունների նման անհրաժեշտ չափով տեղ հատկացվեր նաև «Ռամկավարական» կուսակցության գործունեության գնահատմանը։ Գրքի 205 էջում շարադրանքից այնպիսի տպավորություն է ստացվում, որ XIX դ. 80-ական թվականներին գյուղացիությունը Հայաստանում կանգնած էր «դասակարգային պայքարի ճիշտ ուղու վրա», իսկ ցարական պաշտոնյաները նրանց շեղում էին այդ ուղուց։

Սխալներ կան Ջալալօղլու 1899 թ. մարքսիստական խմբակի կազմին, ինչպես նաև Հաղպատի 1903 թ. ապստամբության ղեկավարներին վերաբերող հարցերում։

Սխալ է 1903 թ. Ալավերդու բանվորների տարերային, տնտեսական գործադուլները վկայակոչել որպես քաղաքական պայքարի օրինակներ։ Հատորի 383 էջում խոսվում է «Համառուսական զինվորական միության» Ալեքսանդրապոլի կայազորի սովետի մասին։ Այդ ի՞նչ սովետ է։ Չէ՞ որ 1905 թ. Հայաստանում սովետներ, այն էլ զինվորական, չստեղծվեցին։ Իշխանության մարմինների հարցում մեզանում բարձրակետը դործադուլային կոմիտեներն էին, որոնք իրականացնում էին սովետների ֆունկցիաներ։

Ճիշտ չէ 1912 թ. ՌՍԴԲԿ Պրագայի (VI) կոնֆերանսում ընտրված Կենտկոմի կազմի պատմական աղբյուրը վկայակոչել «ՀԿԿ պատմության ուրվագծերը» (էջ 461)։

Վաղուց ամրացված սխալը այս գրքում ևս շարունակում է տեղ գտնել։ Նշվում է, որ 1917 թ. աշնանը «Կովկասում առաջինը Բաքվում կատարվեց սովետների բոլշևիկացում, ապա՝ Գրոզնիում, Ալեքսանդրապոլում և աստիճանաբար այլ վայրերում» (էջ 623)։ «Բոլշևիկացում»

ասելով տվյալ դեպքում հասկացվում է, որ սովետներում մեծամասնություն կազմեցին բոլշևիկները։ Նշված քաղաքների վերաբերյալ դա իրական չէ։ Մասսաների ձախացման, բոլշևիկների նկատմամբ նրանց համակրանքի աճի պայմաններում բոլշևիկները Կովկասում ևս պայքարում էին սովետների կազմի վերընտրության համար։ Մի շարք վայրերում այդ նրանց հաջողվեց։ Նոր ընտրություններից հետո բոլշևիկները սովետներում լրջորեն բարելավեցին իրենց դիրքերը, անհամեմատ շատ տեղեր նվաճեցին։ Բայց անգամ այդ սովետներում շարունակում էին մեծամասնություն կազմել աջ բլոկի ներկայացուցիչները, մի բան, որը բնավ չէր արտացոլում մասսաների իսկական տրամադրությունները։

Կարծում ենք, խմբագրական կոլեգիան պարտավոր էր առանձին նշել, թե ակադեմիկոս Աշ. Հովհաննիսյանը հասարակական-քաղաքական հոսանքներին և կուսակցություններին վերաբերող գլխի որ հատվածների հեղինակն է, որովհետև հայտնի է, որ հանգուցյալ ակադեմիկոսը այդ խնդրում ուներ իր ուրույն տեսակետը։ Այդ գլուխը շարադրելիս անհրաժեշտ էր նշել նաև վերջին տարիների գրականությունը։

Հատորի 471, 548 էջերում շփոթ է առաջացել որոշ գործիչների վերաբերյալ։ Բազմիցս օգտագործվում է նաև ֆեդայի և ֆիդայի։ Կարծում ենք, որ ճիշտ է վերջինը։ Այն արդեն ձեռք է բերել քաղաքացիական իրավունք։ Ինչու Ռիխարդ և ոչ Ռիխարդ (էջ 418), ոչ թե «ընդհատակյա տարիներին» (էջ 340), այլ «ընդհատակի տարիներին»։ Որոշ թերություններ կան մեջբերումներում, նշված աղբյուրներում։ Լիովին հաղթահարված չեն կրկնությունները։ Լավ կլիներ մտածել քարտեզների կայուն տեղադրման մասին։

Չնայած նշված թերություններին, գիրքը, ամբողջովին վերցրած, ընդհանրացնող լուրջ ներդրում էր հայ ժողովրդի պատմության գիտական լուսաբանման գործում։

ՀԵՆՐԻԿ ՄԵԼԻՔՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր